ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **«10» «սեպտեմբերի » 2019թ.**
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Հ.Երեմյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Գ.Մուրադյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ա Հակոբյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ Զոհրաբյան

1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Հ.Երեմյան)

1.1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2019 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 11 00-ին, շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ, 514 սենյակ հասցեում·

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2 1 «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «ՎԱԼՄԼ» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ Հինք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի քարտուղարը, կցելով Կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը, նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել է «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը Կարգի 48-րդ կետի համաձայն «ՎԱԼՄԼ» ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը՝ ներկայացնելով կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը

3. «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Հ.Երեմյան)

3 1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են շրջակա միջավայրի նախարարության gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Հ.Երեմյան)

4.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հաղթող ճանաչել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին

4.2 Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4 3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը.

4.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում·

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0.

5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Հ Երեմյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Գ Մուրադյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ա Հակոբյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ Զոհրաբյան